ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2025թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ՀՐԱՆՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն ՀԽՍՀ վաստակավոր ինժեներ Հրանտ Ենգիբարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոցի h.14 Ա հասցեում փակցնելու համար:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՐԱՆՏ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հ. Ենգիբարյանը ծնվել է 1929թ., Երևանում:

1947թ.գերազանցությամբ ավարտել է Երևանի թիվ 40 միջնակարգ դպրոցը և ընդունվել է Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի մեխանիկայի ֆակուլտետը:

1952թ. ավարտելով ինստիտուտը՝ գործուղվել է Լենինգրադ /այժմ՝ Սանկտ Պետերբուրգ/:

1954թ. վերադարձել է Հայաստան և աշխատել Երևանի էլեկտրալամպերի գործարանում, ապա՝ «Հայէլեկտրալույս» արտադրական միավորումում, Կիրովականի /այժմ՝ Վանաձոր/ «Ավտոմատիկա» ԳՀ ինստիտուտում՝ որպես ավագ ինժեներ,

1957-1969թթ.՝ եղել է Երևանի էլեկտրալամպերի գործարանի տեխնիկական բաժնի ավագ ինժեներ, ապա՝ գործարանի գլխավոր ինժեներ:

1969թ.նշանակվել է Երևանի «Հայէլեկտրալույս» արտադրական միավորման գլխավոր տնօրեն, 1974թ.՝ ՀԽՍՀ Պետպլանի նախագահի առաջին տեղակալ՝ մասնակցելով ժողովրդական տնտեսության համալիր ծրագրման խնդրի լուծմանը:

1975թ. մարտի 18-ին ընտրվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ:

1968թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ վաստակավոր ինժեների պատվավոր կոչում:

Հ.Ենգիբարյանը մահացել է 1975 թվականին: Հ.Ենգիբարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Կիևյան փողոցի հ.14 Ա հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացվել է ՀՀ քաղաքացի Ռոբերտ Ենգիբարյանի կողմից: Հուշատախտակի տեղադրման ֆինանսական ծախսերը կատարվելու է ընտանիքի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ